«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
# 2025-2026
# Մայրենի (4-րդ դասարան)

## Պատասխաններ

**1**. Գայանեն գրատախտակին գրել էր մեղմօրոր, կծկվել, ճամփորդել, մախթանք, կրծել, պարգեվել, կծկտուր, խոնարհել, ըմբշամարտիկ, դաշյուն, երփնավառ, երբեմն, բրդոտ, բացարձակ, ակընթարթ, արցյունք, արդուզարդ, բզկտել, օրստորե, ընթերցել բառերը: Արսենը ջնջեց սխալ գրված բոլոր բառերը: Քանի՞ բառ ջնջեց Արսենը: Սխալ գրված բառերը գրի՛ր ճիշտ.

ա) չորս  բ) հինգ  գ) վեց  դ) յոթ

**2**. Տրված վիզ, հյութալի, կույր, ապերախտ, լոկ բառերը տեղադրի՛ր այնպես, որ պահպանվի առակի հատվածի ամբողջությունը:

Ա՛յ ապերախտ կենդանի,  
Ով քեզ նման վիզ ունի,  
Իր կույր աչքով չի՛ տեսնի,  
Որ կաղինը հյութալի  
Լոկ այս ծառն է քեզ տալի...

**3**. Դեմ դիմաց գրված բառերից ստացի՛ր նոր բառեր: :

նախշուն, նկարիչ  նկարանախշ  
գրասիրտ, անծանոթ  անգութ  
մայրաքաղաք, բալենի  մայրենի, քաղքենի  
ուղեգիր, ծառատունկ  ծառուղի

**4**. Գծով միացրո՛ւ հեղինակի անունը համապատասխան ստեղծագործությանը:

Ղազարոս Աղայան՝«Անահիտ»  
Հանս Քրիստիան Անդերսեն՝ «Ջրահարսը»  
Հովհաննես Թումանյան՝«Սուտլիկ որսկանը»  
Շառլ Պերրո՝«Կարմիր Գլխարկը»  
Ջանի Ռոդարի՝«Չիպոլինոյի արկածները»

**5**. Երբ ականջ, ջահել, լուրջ, վերջ, ջահ բառերում նույն տառը պահմտոցի խաղա, այդ բառերը կկերպարանափոխվեն: Ի՞նչ նոր բառ չենք ստանա բառերի կերպարանափոխումից հետո:

ա/տարեց         բ/ռումբ         գ/տեղեկություն         դ/վախ         ե/շեղ

**6**. Ո՞ր բառն է հետևյալ շարքերում «ավելորդ» : Ընդգծի՛ր այն:

ա) բաղձալի, անձկալի, ցավալի, ցանկալի, տենչալի

բ) դյութիչ, բրիչ, հմայիչ, գրավիչ, հրապուրիչ

**7**. Լրացրո՛ւ աղյուսակը։

| Բառը | հոմանիշ | հոմանիշ | հականիշ |
|---|---|---|---|
| ծածուկ | գաղտնի, գաղտագողի, | թաքուն, գողտուկ, | բաց, ակնհայտ, բացեիբաց, հայտնի |
| կազդուրվել | լավանալ, առողջանալ | ապաքինվել | նիհարել, հիվանդանալ |
| երախտամոռ | Ապերախտ, երախտամոռաց, | անգոհունակ, անշնորհակալ, աներախտիք, բարեմոռաց, | երախտագետ<br>շնորհակալ, |

**8**. Նախադասությունների մեջ բաց թողած բառերը լրացրո՛ւ ողջ բառի համապատասխան հոմնանիշային իմաստներով:

Թագավորի կրտսեր որդին հաղթահարեց պատերազմի բոլոր դժվարությունները և կենդանի վերադարձավ տուն: Նա ամբողջ տարին անհոգ և երջանիկ ապրեց պալատում:

**9**. Երեքի տանը հյուրընկալվեցին եռանկյունը, եռաժանին, երեքնուկը, երեսնանոցը, եռանդունը, եռյակը, եռմանը, երեսունը և զեռունը: Ոմանք նրա հարազատներն էին:
Նշի՛ր օտարների շարքը:

O երեսունը, եռյակը, եռանկյունը

O երեսնանոցը, երեսունը, եռանկյունը

O եռանդունը, զեռունը, եռմանը

O եռյակը, եռաժանին, երեսունը

O եռաժանին, երեսնանոցը, երեքնուկը

**10**. Տրված դարձվածքները արտահայտի՛ր մեկ բառով:

Սիրտը դող ընկնել__ Ահաբեկվել, սարսափել, վախենալ

աչքը ջուր կտրել_սպասել

բերանը բաց մնալ_զարմանալ, ապշել

ծանր ու թեթև անել _կշռադատել

արյունը գլխին խփել __ զայրանալ, բարկանալ, կատաղել

**11**. Ավարտի՛ր առած-ասացվածքները:

Մի հիմար քարը ծովը գցեց, հազար խելոք չկարողացան հանել:

Թռչունը թևով է թռչում,մարդը` անունով ու գործով:

Օձի կծածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա:

Ծառի տակին պառկելով՝բերանդ տանձ չի ընկնի: